

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՍԻՐԵԱՆ
Z. ՄԱՍՈՒՐԵԱՆ

Քարտկան	500 դր.
Վարձատեղ	250 »
Երանանայ	150 »
Արտատնտեսի արկ.	70 ժր.

Բաժանորդագրություն կ'սկսվի
ամեն ամսոյ 1ին և 15

100 ՓՈՐԱ



Օրաթերթ ազգային եւ քաղաքական

Fondateur
M. MAMOURIAN
Directeur-Rédacteur en chef
H. MAMOURIAN,
Arévelian Mamoul,
JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN

100 ՓՈՐԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նոր և Հին աշխարհներու մէջ քաղաքական որակէ նշանակալից նորութիւն մը չկայ Անլուծելիներու կարգին մէջ կ'ստանան Գերմանիոյ դաշնագրին տրամադրութիւններն ու գործադրութիւնը, Եռկո-Սլաւներու և Իտալիոյ միջև բանակցութեանց նիւթ կազմող անվերջանալի հարցը, գործադրութիւնը պատճառաւ պահ մը յառաջ եկող կեանքի մեղմութիւնը, և այս ու ասոնց նման կարգ մը խնդիրներ:

Իտալիա՝ նախարարական տաքնապ մը ունենալէ յետոյ, դարձեալ Նիթթի կը վիճակուի նոր դակիճի կազմութիւնը, որ պիտի յենու կաթոլիկ կուսակցութեան վրայ, անպահովելու համար խորհրդարանի մէջ մեծամասնութեան ձայնը: Նիթթիի նախորդ դակիճին անկումը անգամ մըն ալ կը հաստատուի որ ներքին խնդիրներէ ծագում առած էր և արտաքին քաղաքականութիւնը մաս չունէր անկումին մէջ, քանի որ Նիթթի կրկին կ'յաջողի վերակազմել նոր դակիճ մը:

Թրքական դաշնագրին ստորագրուելու համար տրուած պայմանաժամը կը ձօնանայ Թուրք պետական մարդիկ կ'յուսան թէ պիտի յաջողին ինչ ինչ փոփոխութիւններ ներմուծել անոր մէջ: Անկարելի ոչինչ կայ, ամեն բան հաւանական է երբ խնդիրը Թուրքիոյ կ'պատկանի, սակայն եթէ Համաժողովը զիջանի իսկ փոփոխութիւններ ի գործ դնել, հաւանական չէ որ կենսական ըլլան անոնք ու դաշնագրի ոգին ու տառին վրաս հասցնեն:

Թուրքիոյ վրայ ծանրապէս ճնշող քանի մը պարագաներու մէջ գլխաւորապէս կէտերը կ'կազմեն Թրակիոյ և Իզմիրի հարցերը:

Սակայն կ'մտնան Թուրքիոյ վարիչները որ այդ երկու հարցերը կ'գտնուին զօրաւոր ձեռքերու մէջ և հելլէն վարչապետին հետ չեն կրնար չափուիլ զիւսանագիտական հողին վրայ:

Համաշխարհային ահարկու պատերազմի մը մէջ, Թուրքիոյ գլխավոր մասնակցած պահուն, իր այն ժամանակի վարիչներուն մէջ, թերևս միակ անձ մը գտնուեցաւ որ զգաց սպառնալի վտանգը և այն անկերելի սխալը որու մէջ կը գլխորդէր Թուրքիա՝ իրենց տրամադրութեամբը:

Շատերու համար զարտնիք մը չէ, որ Այտուրի այդ ժամանակի կուսակալը Բահմի, մինչև վերջ հակակիր վերաբերմունք մը ունեցաւ Գերմանիոյ հանդէպ և մէկ կողմէ եղած չարիքը դարմանել կարծեց, հաւանելով յոյն տարրը, և տեղահան չընելով հայութիւնը: Բայց ի բաց կ'կրկնէր որ Իզմիր Եռնաստանի պիտի յատկանայ և ժողովրդաց քուէարկութեան մը պահուն միամտաբար կարծեց, թէ յոյն տարրը արտաքինով և թուրքերու տեղ տալով նահանգին մէջ, ժողովրդային քուէարկութեան մը պահուն թուրք տարրին գերակշռութիւնը պիտի հաստատուի, և թերևս պիտի կրնայ փրկուիլ Այտուրի նահանգը:

Բահմի վտանգին նախազգացումը ունեցաւ, սակայն չկրցաւ աւելի հեռուն տեսնել, չկրցաւ ըմբռնել թէ Համաժողովական պետութիւնները պիտի չհերքին Թուրքիոյ բռնած ընթացքը և այն բոլոր դժուարութիւնները որոց ենթարկուեցան ներքիններու փակումով և այն անակնառելի վտանգները որոց ուղղակի պատասխանատուութիւնը կ'ընդունայ Թուրքիոյ վրայ: Այդ վտանգներէն առաջինն է Թուրքիոյ սին աշխարհի վիճակը: Այս վիճակը յառաջ եկաւ պատերազմի պահուն ռազմավարների ներքիններէն, և ռուս բանակներուն թնդանովի իբրև մակոյտեր տրամադրուելով, յառաջ բերած յեղափոխական շարժումէն, որու արգասիքները կ'վայելէ այսօր բոլոր աշխարհ:

Ռուսական վտանգը հետզհետէ կ'ստանայ այնպիսի համեմատութիւններ, այնպիսի ծաւալ որ հնար չէ այժմէն կուսել թէ ո՞ր և ի՞նչպէս պիտի վերջանայ:

Այդ շարժումը, ինչպէս գիտենք, սկսած է գէպի Հարաւ-Արևելք իջնել, սպառնալով Պարսկաստանի և անոր միջոցաւ՝ Անգլիոյ: Որոշ ու վաւերական տեղեկութիւններ կ'պակսին, և չենք գիտեր թէ Համաժողովական պետութիւնները ի՞նչ տեսակ միջոցներ ձեռք պիտի առնեն կատեցնելու համար այդ մակընթացութիւնը որ կ'սպառնայ ամբողջ աշխարհին:

Յատակ վերլուծում մը ընել հնար չէ, որովհետեւ եթէ ստոյգ է որ Պօլշէ վիճակը միացած են Ատրպէյճանի իսլամ տարրերուն և Թուրքիա գտնուած իրիհատականներուն հետ, որոնց պետի է Մուսթաֆա Քէմալ, կ'նստուցութիւնը ալ աւելի անբացատրելի կ'դրոնայ և ապագան անորոշ:

Պօլշէ վիճակը իսլամութեան հետ հաշտեցնել հնար չէ և աւելի ուղիղ պիտի ըլլար խորհիլ, թէ քաղաքական նպատակներու հետապնդումին համար միայն կրնան միացած ըլլալ այդ իրարու հակամարտ տարրերը, և այս տեսակ ենթադրութեան մը պարագային ինչպէ՞ս կարելի է հաշտեցնել պօլշէ վիճակը վարչապետութիւնները՝ համալուծութեան հայեացքներուն և հետապնդուած նպատակներուն հետ:

Համաժողովական պետութիւնները նորանոր դժուարութեանց առջև կ'գլուտնուին: Մինչև այժմ կ'նքուած ու սակից վերջ կ'նքուելիք հաշտութեան դաշնագիրները իրենց վաւերական հանգամանքը պիտի կորսնցնեն, եթէ վաղը՝ Ռուսաստանի մէջ վերջնապէս կազապորուի հաստատուն կառավարական շէնք մը, պօլշէ վիճակը սկզբունքներու վրայ կերտուած:

Իսկ եթէ այդ շէնքը զինուորական րիթմով ընկնէ մը կերպարանքը ստանայ, այնքան մեծ չափով ըլլալ վտանգը, համաժողովական եղբիք գտնելու աւելի մեծ հպանականութեամբ:

Անգլիա՝ որու գէտ կ'ուղղուի առայժմ պօլշէ վիճակը, որովհետեւ Հնդկաստանի համար մշտապէս սպառնալիքի մը կերպարանքին մէջ կ'մտնէ, ընա-

կանարար միջոցներ կ'տորհի և թերևս արդէն սկսած է զանոնք կիրարկել, սակայն ցարգ՝ որոշ տեղեկութիւններ չկան:

Գերմանիա ևս կ'տառապի ներքին խռովութիւններով, իր շղթայազերծած պատերազմին արգասիքները և իր տնտեսական վերականգնումին համար առաջարկութիւններ կ'պատրաստէ: Արաբ մէջ տեղի ունենալիք յառաջիկայ համաժողովին ներկայելու համար:

Մ. Նահանգները քաղաքական խնդիրներու մէջ կ'պահեն իրենց մեղմական անշարժութիւնը և ինչպէս ըսինք շատ անգամներ, պիտի շարունակեն միեւնոյն անշարժութիւնը, զեռ շատ ամիսներ, մինչև որ յայտնուի նախազանական պայքարին արդիւնքը:

Առջի օր հասած հեռագիր մը կ'տեղեկացնէր թէ ծերակոյտը մերժած է Գերմանիոյ և Աւստրիոյ հետ անջատ հաշտութիւն կնքելու համար եղած առաջարկը, ուրիշ լուր մըն ալ կ'տեղեկացնէր թէ Ռուսիոյն արտօնութիւն խնդրած է ծերակոյտէն ստանձնելու համար Հայաստանի հոգատարութիւնը:

Վերջապէս ոչինչ կայ յուսադրիչ և ապահովիչ գէթ առայժմ: Քաղաքական շփոթութիւնները ընդհակառակը չափազանց խռովական վիճակ մը կ'ներկայեն և կ'սպառնան անգամ մըն ալ աշխարհի խաղաղութիւնը վրդովելու, տարբեր պայմաններու և տուեալներու վրայ:

Հ. Մ.

ԶԱՅԵԼԹՅՆ ՍՏՅ

Հայ ընթերցատան վարչութիւնը կ'պատրաստուի ընթերցատան յիսնամեայ յոբելեանը տօնելու յառաջիկային յարմար թուականի մը:

Հայ ընթերցատունը Իզմիրի համար կ'ենդանի յիշատակարանի մը երեւոյթը կ'պարզէ և կ'մտանանչէ Իզմիրի հայութեան փայլուն անցեալը, որ շատ աւելի մեր ու նախորդ կար ընթերցատարութեան, գրականութեան և ուսմունքի:

1869ին հիմնուած է այդ հաստատութիւնը, Իզմիրցիին պէտք զգացած է անոր, որովհետեւ այդ ժամանակներուն ամենէն հուղեղտութեան կենտրոնը ընդ մին հանդիսացած է և Արտալայէ նոր դարձող եռանգուն երիտասարդներ, միանալով Իզմիրի մէջ գտնուած գրասենտներու հետ, մտադրած են այդ հաստատութիւնը հիմնել, որ իրեն կեդրոնատեղի պիտի ծառայէր ուսումնասիրչներու:

Ընթերցատանը ունեցած է շատ փայլուն շրջաններ, նախ և առաջ հաստատուած է թերթի հիմնողին տղամուտան մէջ, որու նախկին շէնքը նպատակայարմար համարուած է այդպիսի հաստատութեան մը համար: Հոն ցացի օրուան թերթերէ ու գրքերէ, կազմակերպուած են նաև հրատարակախօսութիւններ, ուր խոսած են Մարգար Միրզա, Մարկոս Աղապէկեան, Գալուստ Կոս անդ, Գր. Մսերեան, Մ. Մամուրեան, Գ. Յ. Բարազեան, Գ. Պուպլի, Գր. Չիլիկիեան, Մ. Նուպար և ուրիշներ:

Անոր հիմնադիրներէ շատեր արդէն մեկնած են այս աշխարհէն, անոնց յաջորդներն զեռ ունենք շատեր Իզմիրի մէջ, որոնք աւելի լաւ թերևս կ'իշխեն ընթերցատան անցեալ վտանքը:

Ընթերցատան յոբելեանէն առաջ կամ վերջ պիտի կատարուի նաև Պ. Սարգիս Ամատեանի ուսուցչական գործունէութեան յոբելեանը, որու մտքին շարժ շարժ մը առաջ Գ. Մ. Մամուրեանը հրատարակեց կենսագրական գրքեր:

Այդպիսի բազմամեայ և բազմարդիւն ուսուցչի մը գնահատութիւնը ընել կ'արտօնուորին նամանակաւոր անոր բազմաթիւ աշակերտները թէ քաղաքի և թէ արտասահմանի մէջ և տարակոյս չունիմ թէ անոնք չպիտի

թերանան իրենց պարտականութեան մէջ, այսպէս յայտնելով իրենց երախտագիրութիւնը:

Իսկ Իզմիրցիին ճիտին վրայ կ'ժամանայ կարևորագոյն ուրիշ պարտականութիւն մըն ալ, որմէ չէ կարող խուսափիլ և որու մասին ըստ կարգի պիտի խօսիմ, ըսեմ անմիջապէս թէ այդ պարտականութիւնը կ'կայայնայ իր քաղաքացիներէն արժանաւորագոյնին՝ Մարգար Նուպարի յոբելեանը կատարումին մէջ:

ԵՍ

ԿԸ ՁԻՒՆԷ

Կը ձիւնէ խոշոր բաթիւներով. — Լեռ ու ձոր, գալառ ու կոփա, ձիւնէ սպիտակ սաւանով ծածկուած են. — Երեկ զեռ գարուն էր մեր չորս դին և այդ գարնան գազը արևուն մէջ ամբարն շոգն ու տօթը կ'զգային: Թառուսիկ ջերմը՝ զոգի սարսուռներարկ կեց մեր երակներուն մէջ: Մթնոլորտի յանկարծական փոփոխութեամբ մը, տեական անձրևները ձիւնի փոխարկուեցան, սառեցնելով նորածիլ ծագիկները ծառերուն, սառեցնելով նախնիներն ու կի:

Մարտի վերջին կիսամտեայն, ողջունեցինք: Արապիլը երամովին եկած թառած մեր երգիքներուն, մեր տանեաց վրայ Ապրիլը բարեւը կը կափկափէ: Ենդ հաս Հալկիլը սառուցէն պահպանելու ճիգով, ինք պիտի ստաբի ինչոք փութի ձագիւնէն:

Հանդիպակոց լեռներն Ամանոսի, անդին՝ Գոզանի մեծ ու փոքր բարձունքները, բոլորովին ձիւնապատ, անցք չեն տար ճամբորդին Արքերակները ստոած: Լեռնային կրկիլան, Գալուստի կրկիլոյ հետ յարաբերուող մէկ միջոց, ոչ մէկ հնարաւորութիւն ունի:

Լեռնային կրկիլան Գալուստի կ'օգնութիւնը սպառնալիք: Սակայն կիրճերը բռնուած են կը լսենք Լեռնային կրկիլոյ սովալուկ ժողովուրդին վերջին ճիչերը: Գալուստ անոնց տուներուն առջև կ'ուսնան: Գառնակներուն հեղձածոցնայ մայրերնը կը լսենք Մեծ անկարկիլը, չենք համարձակիլր ուէ կերպով, ուէ գինով փնջիկ մը կանաչ խոտ հասցնելու իրենց փորսխներուն մէջ: Բռնապետութեամբ այս անկող գառնակներուն Գերմանիային մեր ջանքը փորձենք, եթէ երկ կամեցանք մեր կարելի օժանդակութիւնը:

Ձիւնը կը շարունակէ Լեւոն կա- տարէն ստորադ իջած միջին, դաշտի կանաչ ցանքերուն կողովոյն:

Ո՞վ ա՛րզա՞յ, ձիւնամարդ շինելով գինովի գուարճութիւնը կը փորձես:

Այո՛, Ատանան, իր շրջակայքով, տարիներէ, հնորեայ տարիներէ ի վեր այսքան ձիւն ձմեռ չէր տեսած: Գու- ըն իրականութիւն, իրերը, սոյնարն, ժամանակը յեղաշրջուեալ էր կարծես Մարդկային շրջակայի հաշիւներով, անտէր, անտիրական գաղթականը դի- մած էր կիլիկիոյ դռները, սակայն չեն բացուիր յուսոյ այդ դռները: Իր ցան- կութիւնները, իր բազմաթիւ փորձան- քի փոխուեցան Ա՛յս, ո՛ր քան կը զըզ- շայ այն իր գաղթի վայրերը Լեւոն, և իր հայրենի սարերը գրկած ըլլա- ըն համար կիլիկիոյ մէջ՝ սարերը սառ, սիրտերը քար, սմբող կիլիկ- իան կանցնէ շրջան մը ցուապար... սարուս, ստիպում կանգնել կամ ծա- մենուրեք:

Արիւնը հազիւ կը շըջի երակներուն մէջ:

Կը ձիւնէ, կը ձիւնէ, կը ձիւնէ տ- մենուրեք Գու՛ն, իմ... դրանտ առջև, միայն Գաշտային կիլիկիոյ մայրաքա- ղաքները չեն հագած պատանքը սաստ կաշունչ ձմեռ-ըստութեան:

Այսօր այս լեռ, վաղը միւս լեռ- Ձիւնը քայլ առ քայլ գաշտ է իջնու- րաշար ժողովուրդը ինքզինքն յայտա- հովի կը կարծէր երէկ, սակայն այսօր իր մորթին վրայ կ'զգայ մօտիկ լեռ- ներու բուքն ու բուքան: Վաղը իր գլխուն ալ պիտի իջնէ, ձիւնը՝ հան- զիպակաց սարերուն, երբ արդէն ու- թի ու ծարաւ մեռած պիտի ըլլայ լեռ- նային կիլիկիան՝ անգլխօրէն Լեւոնի զայտայնէն:

Գլուխս ձիւն է պատեր: Գան- կիս հետզհետէ պաղիլը կը գտնուի:— սո- քերս սառ կտրիս եմ:— ամբողջ մար- մինս կը սըրսըփայ, բազմիմար կը կոտորայ:— մահուան նոպան կ'զգամ սրտիս մէջ...:

Կը ձիւնէ խոշոր բաթիւներով: Լեռ ու սար, դաշտին հաւատար, հազիւ եմ ձիւն ու սառ: Աստուած իմ, օգնու- թիւն:

Գայլեր պիշտախը գայլեր կը վրասն մերքազաքինը: Երբ բնակարաննե- թուն մօտիկ Որքան անեղ են անտէր: Լեռնէն վար են իջնու, ծանոթ բարե- նիներն մարդակեր:

Հովը կը փչէ, քամին կ'աննայ: Քա- ընձաններու խորքէն մարդկային շունչերու ողբի կոծի արձագանքը կը բերէ մեզ հիւսիսին:

Մենք երէկ անտարրեր էինք գեռ մեր արեւակից սովեակներուն հանգէպ: Այսօր ալ աշխարհ, իրուսամբ չի լսիր մեր կոծն ու աշխարհ:

Ձէ՞ք տեսներ:— Ծովերէն անդին, ծովերը, հակայ նաւերուն կամրջակին վրայ, զանխուլ մեր կաշին ու կանչին, կը զուարճանայ անտարրեր:

Ո՞վ կը հաւատայ թէ՛ այս օգին այս եղանակին կը ձիւնէ կիպրոսի հանգի- պակաց ցանկալին կիլիկիոյ դաշտերն ու արիւնք:

Երկաթուղին կասեցուցած իր կա- ուշարքի վաղքը, արգիլուած՝ լեռնե- թէն գլորուող ձիւն հիւսերուն առջև, չի հնչեցնիր «սինեալ տ'ալարմը»...:

Աշխարհ մեղէ, մենք արտաքին աշխարհէ լուր չունինք: Հեռուէն, ծո- վուն բացերէն անցնող նաւեր չեն տեսնիր մեր չորս հովերուն յանձնած անձկութեան դրօշը: Թշալով կը ճեղ- քեն կերթան ծովի ջուրը աղի, հեռի սրբելէ մեր արտասուքը:

Այսօր այս լեռան կատար, վաղը միւս լեռան, օր մ'ալ պիտի ձիւնէ մեր գլխու վրան... Գարնան այս շերտ օ- բերուն:

ՄԵԼՔՈՆ ՍՍԱՏՈՒՐ



ՀԱՅԿ. ԳՐԱՏԱՆ. մէջ կը ծախուին Հայ Երկ, Աստուծո հանգէ- սնոր, հայ երեսնիդէմ- քերու բարձր-քանակներ Քնդհա Քնդհա Գրքեր գրական հանգէսին:

ԸՆԴՂԱՅՆՈՒՄ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԻՒՆ

Սան Բէմօր վեհաժողովին և Լոյս ձորձի կամ ուրիշներու գնահատման պա- ըագաներու տակ յայտնած գաղափար- ները անգամ մը եւս եկան հաստատու- թէ ո՛ր մը է որ կ'ապահովէ ու յայտնա- կը բերէ խաղաղութիւնը: Եւ անգամ մը եւս եկան շտապուն ապակ մը զարնել այն ամեն, թող իրոքի կոչել, ձթուած գլուխներու որոնք առանց զէնքի ու կոտորի կ'ազնին խաղաղու- թիւն ձեռք ձգել: Անոնց ունեք միա- մըտօրէն հաւատարմով ու վստահելով զի անագիտակիտ ազդեցութիւններու կամ խոտարմիներու, կը յուսային խա- ղաղութիւնը ունենալ և աշխարհը հոն- գարտած տեսնել:

Ահաւասիկ Թուրքիոյ ներկայ կա- ցութիւնը: Թէ որ Մեծ Տէրութիւն- ները առաջին օրէն ոյժի զօրութեամբ մտնենային, փոխանակ զի անագիտա- կան բռնաձեռներու, քաղաքակրթու- թեան սահմանէն հեռու մնացած բար- բարս Թուրքին, գէթօ արտիւզէսէ սողին, երբէք անգի պիտի չունենա- յին այն սարսափները որոնց սկսնա- տեաները եղանք, ու չպիտի հասէին արիւնի գետերը ունեք պարզապէս մեղմ ու մարդասիրական վերաբերումի գնահատումէն զուրկ ժողովուրդի գոր- ձերն էին:

Թէ որ Հայաստան 200,000 զին- եալ ոյժ մը ունենար, արդէն ապա- հոված պիտի ըլլար իր գարաւոր իրա- ունեքներն ու խաղաղութիւնը իր սահ- մաններուն վրայ: Իր ոյժին պատկա- ունեք վայր պիտի աղէք մեր ուխտ- եւ լ թշնամիներուն ու ակնածանքով վերաբերուելով պիտի զգուշանային հայու մը քիթն իսկ արիւնիէն իսկ կը մտնէ քիթն անհունօրէն տարբեր պղծեցութիւն մը պիտի ընէր նոյնպէս վեհաժողովի որոշումներուն վրայ: Մեր գաւառները մեր ձեռքով պիտի չհեղնէ: Սակայն մեր տիրութիւնը քաջալե- րանք եղաւ Թուրքին, անտեսելու պատճառ եղաւ Տիտաններուն:

Գաղափարներու մեծազորք ստո- ըագութիւններն իսկ գրիթէ արժէքէ զուրկ մնացին ու կը մնան Օրիւնօ՞ղ:— Գերմանիան: Երբ ստորագրութիւնը յշարկեր ու կ'ապահովայ աշխարհի խա- ղաղութեան, ի՞նչ բան պիտի բռնար այս խոշընդողը բայց միայն ոյժը, պատերազմը: Եւ միթէ այդ ոյժի ըս- պանակներին տակ չէ՞ որ գէթ սո- այժմ կը հպատակի անոր հրամաննե- թուն:

Կը յիշեմ անցեալ տարուան Պ. Պ. Միւրոպ Լուպարի ու Վատարնդիի գրովէնքը, ուր լին պիտի թողում որ Մ. Եւրոպայի բոլոր յուսուող զաւ- յասէր նախագահը Մ. Բուզլէլի պա- տասխանէ ամերիկեան Independent թերթին 1899 Դեկտ. 21 թիւին մէջ հրատարակուած իր յոգուածովը որ այսօր իսկ ճշմարտութիւն մըն է, հոգ չէ թէ գրուած ըլլայ շուրջ քան տա- լիներ սուտ:

Մեր բանաստեղծներուն ամենէն քնքոշն էր որ կը գրէր:— «Համարձակ լիւր, համարձակ լիւր, ամեն տեղ լիւր համարձակ, Ծառ համարձակ մըլուս Սակայն լուսազոյն է ու շիտակ՝ Աւելին քան թէ պակասը, ծայրա- յեղը քան թէ զուրկը»:

Հօնկիլէլոյի խաղաղութեան համար ունեցած սէրը խորունկ էր: սակայն ինք մարդ մըն էր ու իմաստուն մարդ մը ու գիտէր թէ երկչոտութիւնը չքա- շայրեր խաղաղութիւնը և թէ նոյն- ինքն պատերազմի մեծ չարիքը աւելի նուազ յոռի է քան անխորտութեան քծնիլը:

Չօրավար Մահանէ աւելի ո՞վ կայ երկրին մեջ, մարդ մը որ իրմէ աւելի յարմարօրէն ու վայելչօրէն ներկայա- ցնէր «Քրիտոնեայ ճէնթիլն» պար- բերութեան գեղեցիկ ու բարձր իմաս- տը, որ չլսատուողը ու և է թերու- թիւն մը՝ ազգային թէ անհատական, և որ խոհուն ու ճշմարիտ մարդերու բացարձակ մեծամասնութեան զգա-

ցութիւնը չիտար, երբ կ'ազգարա- ըր թէ ու և է գնով խաղաղութիւնը ձեռք ձգելու անորոշ շտապովները աւելի ազատարար է, քան զի այս բանը կը նշանակէ մարդիկ մեղի իրենց շարագործութիւնը չափաւորելու, ու- նարդարութեան հետ իրաւաստու- թեան գալու և խղճերին շողմեղու- այնհաւատքով թէ պատերազմը այն քան բացարձակ մտաւ մըն է որ անոր քով ու և է մեղք այնչափ մեղազորի պիտի չըլլար: Տեսէ՛ք Հայաստանն ու կրե- տէն: Պատերազմէն խորշուեցաւ, սա- կայն ո՞ւր մնացին այդքան ազգա- մութեան սկանաւաւ ըլլալով ձեռ- քերին յաշ զ ազգային խղճերը:

Պատերազմիւնը մեծ բարիք մըն է, նայնաստե կրկնուպէս ազատարար: հե- տեւ թար այն պիտիներու գիրքն է ո- ընք չարիքի գործութեան զէմ պատե- րաւմեղու հասալը ու վստիտա խուսա- փումով մը այսպիսի լուսերով կը ջա- տագովին գայն: Պատերազմիւն ամե- նախմատուն և ամենահեռատես շա- տագովները միշտ յիշելու են թէ բարի ըլլալու համար պէտք է նախ և ա- ռաջարգար ըլլալ որովհետեւ անար- գար ու վստիտա խաղաղութիւն մը կրնայ ու և է պատերազմէ աւելի աղե- տալից ըլլալ: և երկրորդ՝ յաճախ ի գին պատերազմի է որ կարելի կ'ըլլայ գայն ձեռք ձգել: Երկու օրինակներ աւանտ:—

Երոպական միջազգային բարոյա- կանութեան վրայ մեծազոյն արտաք- պատերազմը չէ եղած այս գարուս վերջին տասնեակ տարիներու ընթաց- քին, այլ մեծ տէրութիւններու գոր- ձակցութեամբ պահուած խաղաղու- թիւնը, երբ անգին Թուրքիան արիւն- հեղութեան զօրարարքի ու բռնա- բարութեան ամենավերջին սարսափ- ները կը գործադրէր յուսահատ Հա- յաստանի այրերուն, կրկնուած ու մանուկներուն վրայ: Պատերազմէն խուսափուած ու խաղաղութիւնը պահ- ուած էր: սակայն ի՞նչ խաղաղութիւն: Այս խաղաղութեան միջոցին մարդկու- յին անհունօրէն մեծ խեղճութիւններ տեղի ունեցան քան ինչ որ եղած էր Գերմանիոյ Ֆրանսիոյ հետ և Ռուս- իոյ՝ Թուրքիոյ հետ ունեցած վերջին պատերազմներուն մէջ և այս խեղճու- թիւնը ո՛չ թէ զինեալ այլ մարդերու գլխուն հասաւ այլ անպաշտպան ձե- րերու, կրկնուած և մանուկներուն Այ- սուհանդերձ ոչ մէկ բարիք յառաջ ե- կաւ արիւնհեղութիւնէն ու թշուառու- թեանէն: Յաճախ այս է որ կը պատահի պատերազմի մը պարագային, սակայն յամար ալ չպատահիր վերջին Ռու- սոթուրք պատերազմին արդիւնքը: Պուլկարիոյ, Սերպիոյ, Պոնան և Հեր- ձէկովիայի համար երջանկութեան ան- հուն ու մնայուն աճում մը եղաւ: Այս նահանգները անկախ հռչակուե- ցան և կամ Աւստրիոյ իշխանութեան տակ անցան ու բարբարոսութեան վերջանալովը քաղաքակրթութեան սահմաններուն այս ընդարձակումէն պարզապէս անգնահատելի էին ա- նոնց բազմապատկուած տաւելու- թիւնները: Այս ընդարձակումը խա- ղաղութիւն յառաջ բերաւ ու գարեբէ ի վեր Պուլկարիոյ արիւնի գործնող անվերջ կրծող ու արիւնի տարակա- լութեան վերջ մը տուաւ:

Թարգմ. Մ. Յ. ԲԱՐՔԻԿԱՆ

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ ԳԵՐ ՄՈՒՆԵՆ ԱՐՔԵՊՈՒ ԲԱՆԱԹՈՒԹԵԱՆ

Հայրենակիցներ, Հայ կեանքի իրականութեան մէջ այսօրուան մեր խանդավառութիւննե- ըր կը ներկայացնեն արժանիք մը ո- ընուն իսկապէս կարօտը կը քաշէինք երկար գարեբէ ի վեր: Հայ կիցեցին և Հայ ժողովուրդը երկար տառապան- քի օրերու մէջ ի զուր իրենց սրտի ա- ղապտանքը գրին քրիտոնեայ ժողո- վորդներու յողթայանկին համար, կար- ձեղով որ վերջը պիտի գար մեր տա- ռապանքին և անխորտանի կատա-

րկցինք սոցիալիզմ ու փառարանելով գանձը: Կ'ապրին այդ քրիտոնեայ պիտութիւնները շահագործելով մեր սրտին յայրերն: և սպորները տառա- պած Հայ Ազգին:

Մեր հոգիէն բխող քաջարի գա- ւակներ, Արքայաներ, Արժուունիներ, Գոմառ - Քաթիպաներ, Մաթթիներ փնտեղեցին, երգեցին, սգեկոչեցին ա- զատութիւնը, և սակայն չկար անկաւ Ամեն անգամ որ հայ բանաստեղծը երգեց ազատութեան գաղափարը, նոր խաչ մը՝ տառապանք մը սկսաւ մեր ցաւերը շաղկապելու և այսօր մեր անձ- նուր մշակներէն վերջ մեզի կ'արուի ծախահարկու Հայ Անկախութեան գա- յութիւնը: (Թառն Ծախիք)

Բարեկամներ, մենք խաղաղեցանք տարուելով մեր զգացումներէն, գրինք մեր յոյսերը օտար գահերու առջև, և չկրցինք ըմբռնել թէ քաղաքականու- թեան մէջ պատիւ, առաքինութիւն չկար, մոռցանք թէ Ֆրանսիոյ գա- ւակներէն մին ըսած էր «Թէ պատիւը ստուեր մըն էր միայն», առաքինու- թիւն չկայ օտար կուրծքերու տակ և կը թողուինք մեր զգացումներէն մէջ: Եթէ երբէք բազմը կ'ունենանք այսօր տօնելու, չենք պարտիր Երո- պայի մարդասիրութեան, և երախ- տապիտութեան բառ մ'անգամ չի գար մեր շրթներուն: Այսօրուան գոյու- թիւնը արդիւնքն է հայ ժողովուրդի բազուկին (կեցցէ՛ հայ ժողովուրդը կ'ազատուի ներկայ բազմութիւնը) և որչափ հայ ժողովուրդը ցցուի միա- ցած այդ Ազատութիւնը մերն է և մե- ըր պիտի մնայ (բուռն ծախիք):

Պիտի փափաքէինք անշուշտ որ այսօրուան տօնախմբութիւնը անխա- ուն ըլլար ու աւետարան պատգամներ ունենայինք, բայց մեր այսօրուան փառարան տօնը վիշտի տօն մըն է միտ'գամայն, որովհետեւ անգլղովին չենք փրկուած, որովհետեւ մեր ազ- գակիցներէն շատեր կ'ապրին վստա- րու ձեռքին տակ և Ազատութիւն կ'ոգնեցնեն: Ո՞վ էր որ պիտի փրկէր զանոք: Դիւանագիտութիւնը գուցէ չտար, իսկապէս պիտի չէր Կո- ւստանայն է որ փրկութիւնը կա- խում ունի մեր զոհաբերող կամքէն, որովհետեւ շատ խաղաղեցանք: մեր Ազատութեան յողթանակը մեր ձեռքն է, այս ժողովուրդը պատրաստ պէտք է ըլլայ կուսելու, վստահ եղէք թէ մեր նախնիներուն ոսկորները մեզի հետ կողք կողքի պիտի կուսին թշնա- միին զէմ, բուսական է որ ուզենք: Ազատութիւնը ինքնին չի լինուիր:

Այսօր օվապիս մըն է արիւններու, բրգացած ոսկորներու մէջ և ես պիտի ուզէի որ բուն զէնք առնէինք հայու- թեան պարտէզները շինելու համար: Պէտք եղածին չափ կամք ունենալու ենք վազուան սերունդին տալու հա- մար իր անհանութիւնը՝ Ազատութիւ- նը:

Կ'ողջունեմ Հայկ. Հանրապետու- թիւնը իր քաջարի բանակով, այո՛ կ'ողջունեմ կ'ըսեմ Հանրապետութիւ- նը որ մանրանկար հայութիւնը կը ներկայացնէ, և կը մաղթեմ որ յազ- թանակէ յայթանակ քայլէ կեցցէ՛ Հայկ. Հանրապետութիւնը:

ԱՍՎԱՍՊՈՒԹԵԱՆ ՏԱՐԵՂԱՐՁ

Հայկ. Հանրապետութեան հա- տատման երրորդ տարեգրարք տօնուե- ցաւ երէկ, եկեղեցւոյ շրջակային մէջ խուսանում երկսեռ բազմութեան մը ներկայութեան:

Եկեղեցին գարգարուած էր հայկա- կան եռագոյններով: Առաջնորդարանէ զէպի շրջակայ նայող դրան վրայ կախուած էին երկու քոյր ազգերու յնկն, և հայկական դրօշակները: Յե- տոյ կուսակցին համաձայնական տէրու- թեանց զրօշները, Հայկական և հելլէն զրօշները կը գրկէին Պ. Պոզոս Նու- պարի, Զօր. Անդրանիկի և Պ. Ա. Ա. հարսնեանի շրջանակները: Մանաւոր պատրուազ մտտոյց Առաջ. Տեղապահ որ նոյնպէս խօսե- ցաւ աւուր պատշաճի քարոզ մը:

Գ. ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐ. Տ. ՄՈՒՇԵՂ ԱՐՔԵՓՈՒՄՈՒՄԻ

Ամերիկեան Ե. Բ. Միութեան արահիւ մէջ (նախկին Բրիտանաց)

Կիրակի 30 Մայիս 1920 ժ. 11 (հ. ժ.)

Ն Ի Ի Թ. — ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ

Ե Ր Ք Ե Ի Ն ՈՒ Ս Պ

Մ Ո Ւ Տ Ք 1 0 Ղ Ր Ո Ւ Շ

Վարչութիւն «Ջրմուխ» Լորտոնի Մէնթեան

Իզմիրի Յունաց համակրելի մե- րապօլիտը, Գեր. Թրիտոսթոմոս առաջ- նորգում էր առաջնորդական ամուսն- նոյնպէս ներկայ էին յոյն ազգային պաշտօնական անձնաւորութիւններ:

Եկեղեցիէն վերջ ժողովուրդը խոս- նուեցաւ Առաջնորդարանի դրան առ- ջեւ Օրոշան բանաստեղծութեան խօսք առ- նելէ առաջ «Քնար»ը ամբողջին որո- տընդատ ծափերուն մէջ հնչեցուց «Քամր Որոտան»ը որմէ վերջ Գեր. Մուշեղ Սրբազան, որու տրուած է սրտերը յուզելու և վերացնելու գաղտ ներք, խօսք առաւ Ն. Ս. բանաստ- սութեան ամփոփումը կը հրատարա- կենք ներկայ թիւով:

Մուշեղ Ս.ի բանաստեղծութիւնն և Քնարի հելլէն քայլերը հնչեցնելէն յետոյ հետզհետէ խօսք տուին Պ. Վ. Արծրունի, Պ. Թ. Պոյաճեան և Պ. Ս. Պարթեւեան:

Այս վերջին երեքին բանաստ- սութիւնները պիտի ջանանք ներկայիւ մեր ընթերցողներուն մեր յաջորդա- կան թիւերով:

Բանաստեղծութիւններէ ետք որոշ- ւեցաւ Երեւան և Բարիզ հեռագիր- ներով շնորհաւորել Հայկ. Անկախու- թեան երրորդ տարեդարձը:

ՎԱՂԸ ԿԱՐԴԱԼ

ՄՏՔԻ ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐ

ԳԵՐ. ՄՈՒՇԵՂ ԱՐՔՊՍ.Է

Ազգային Անցուկարմ

ԵՐԳԱՆԱՆԻՒՄ

Յառաջիկայ Չորեքշաբթի Յունիս 2 ին տեղի կունենայ Սըլանախա Բա- լասի հանդիսութեանց արահիւ մէջ Պ. Հանրի Գարահանի երգահանգէսը: Ինչպէս գրեցինք արդէն Պ. Գարահան շատ տարիներ եւրոպ. բնակրու վրայ ցուցադրած է իր թէնորի կարողու- թիւնները և արժանացած ջերմ գնա- հատութիւններու: Շատ տարիներ մը- նացած է նաև Աթէնք և ծանօթ մըն է հելլէն երաժշտասէր հասարակու- թեան:

Իր առաջին երգահանգէսը քաղա- քիս մէջ արդէն ծանօթացուց զինք երաժշտագէտ հասարակութեան և բոլոր գծուարտեաններու գոհունակու- թիւն պատճառեց:

Պ. Հ. Գարահանի Չորեքշաբթի օր սարքած երգահանգէսը տարակոյս չունինք թէ պիտի գնահատուի Իզ- միրի երկսեռ երաժշտասէր հասարա- կութեան համար յարմար առիթ մը կը ներկայանայ վայելելու համար՝ այդ արուեստագէտին ներդաշնակ և

հուժկու ձայնը որ բնական պէսպի- սուն յայտագիրով մը պիտի գոհացնէ ունկնդիրները:

Պ. Գարահան՝ աւելի այլազանու- թիւն մը դնելու համար երգահանգէ- սին տարածում է Տիկիի Գէորգեանի մասնակցութիւնը երգով և Օր. Ներ- սէսեանի օժանդակութիւնը դաշնա- կով: Տարակոյս չունինք թէ ունկըն- դիր բազմութիւնը գոհ պիտի մնայ Չորեքշաբթի այս երգահանգէսէն:

— Վտղը Կիրակի Կէօզ-Թէփէի ե- կեղեցուց տնտեսութիւնը ըլլալով կ'անուշուցուի բարեպաշտ ժողովրդեան և Կէօզ-Թէփէարնակ Հայոց որ Առաջ. Տեղագահը հրաւիրեալ է որ պիտի պատարագէ ու քարոզէ:

Ուշագրութեան կը յանձնենք մեր ընթերցողներուն 4րդ էջի ծանու- ցումներն և դրամական հրատարակը:

ՄՐՃԱՐԱՆ-ԳԱՐԵՋՐԱՏՈՒՆ

Ի Վ Ի

ՆԱԽԿԻՆ ՔՐԱՄԷՐԻ ՇԷՆՔԸ

Քարափի վրայ «Բանիկէլլէնիոն» արձարանը նորոգելուով մօտ օրէն պիտի բանայ իր դռները, «ՊՊՊ» տ- նունին տակ և այս գործին մասնա- գէտ Ե. ԷՎՄՕՐՅՕՆԻՏԻ տնօրէնու- թիւամբ որ բաժնուած է Չարիօնի և Արիսթօի անուշեղէնի խանութիւնը: «Իվի» իզմիրցի նորաձաշակներու կեդրոնը պիտի ըլլայ: հոն պիտի տե- րին մաքրութիւն, արագ սպասար- կութիւն, պիտի գտնուին միշտ հա- մեզ կերակուրներ և անուշեղէններ: Մասնաւոր յայտարարութեամբ պէտէ ծանուցանէ «ՊՊՊ» բացուելը:

ԻՐԱՐ ՄԻ ԱՆՑՆԻՔ

ԱՆԱՐԱՏ ԿԱՐԱՅ ԻՆՂ ԵՒ ԱՅՎԱ- ԼՐԳԻ ԱՌԱՋԱՆԿԱՐԳ ԶԷԹ ուրիշ տե- դեր մի փոփոխութիւն, այլ ուղղակի դի- մեցէք:

ՅԱՐԷԹԵԱՆ ԵՂԱՐՑ

Վաղեմի և հանրածանօթ ձաշարանը Եօրկանճըրարի մէջ:

Հ Ր Ա Ի Է Ր

ՀԱՅ ՈՐՈՒՄԻՆ և ՔՐԱՄԻ միացեալ Ակումբներու բոլոր անդամ- ները կը հրաւիրուին անպայման ներ- կայ գտնուիլ ընդհ. ժողովի, որ տեղի պիտի ունենայ 30 Մայիս Կիր. առաւօտա- նան ժամը 10ին (հ. ժ.) Ակումբիս կեդրոնական շէնքին մէջ Հայնոց Բէ- շլաիէ փողոց թիւ 28:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Վ Ե Ր Զ Ի Ն Ժ Ա Մ

ԱՄԵՐԻԿԱ ԵՒ ՃԱՐՈՆ

Ուշախիկընէ հասած հեռագիրներու համաձայն, Ամերիկացի և Ճարնի պատուիրակներու յանձնախումբ մը զէպի Սիպրիոյ Գաղօրոսքի քաղաքը մեկ նած է, տեղւոյն մէջ քննելու համար պալէվիքեան աւերները և մասնաւորա- պէս սիպրիական հանքածուխները:

ԲՈՂՈՆԻՍ ԵՒ ՌՈՒՄԱՆԻԱ

Ռումանական պաշտօնական ազբերներ կը հերքեն այն լուրը թէ, զօր. Աւերէսքօ պիտի մեկնի զէպի Վարչաւիս Բոլոնիոյ և Ռումանիոյ միջև հա մաձայնութիւն մը կնքելու համար:

ԲՈՂՈՆԻԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ

Կը հաւատուի թէ բոլորիական բանակը ունի 1,250,000 զինուոր, որմէք թէև ուղղամիտքէ զօրիկ, սակայն վառ հայրենասիրութեամբ մը կը կռուի իրենց անկախութեան համար: Վերջին տոնները ստացած են Ամերիկեան մը-զ թերանոցներէ հազուատ, և այլ պիտոյքներ:

Բ. ԴՈՒՌԸ ԵՒ Մ. ՔԵՄԱԼ

Պօլսէ կը հեռագրուի թէ թուրք կառավարութիւնն նոր պատուիրակու- թիւն մը զրկած է Անտալիոյ, համաձայնութեան մը գալու համար քէմալա- կաններու հետ:

ԻՏԱԼԻԱ ԵՒ ՌՈՒՍԻԱ

«Փարիսիէ տիթալիս» կը տեղեկացնէ թէ, «Ալանթի» տնօրէնը և ըն- կերվարական երեսփոխաններ Ռուսիոյ կը մեկնին, վաճառականական յարաբե- րութեանց հիմը գնելու համար սովիէթ Ռուսիոյ հետ:

ՍՊԱՆԻԱԿԱՆ ԴԱՂԼԻՃԸ

Մատրիտէ կը հեռագրեն թէ սպանիական նոր դահլիճը կազմուած է Գ. Սանթի Վարչապետութեան տակ որ սանձնած է նաև ծովային նախարարու- թիւնը: Մարքիզ Տէրքօ արտաքին գործոց նախարարութեան և գերկոմս Էլչա պատերազմական նախարարութեան կոչուած են:

ՄՈՒԺԻՔՆԵՐԸ

«Տէլի-Թէլիքալի» կը հարգէ որ Ռուս մուժիքները պատրաստ են կանգ- նելու Սովիէթ կառավարութեան դէմ: Անոնք ուրախութեամբ պիտի գործակ- ցին սպասարար բանակներուն:

Այսպէս կը յուսուցանի որ, բաւարական և ուրախական բանակները, մու- ժիքի երու գործակցութեամբ, վերջ մը գնեն Պալէվիք տիրապետութեան:

ՊՈՆԱՐ ԼՕ Կ'ՐՕՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Հօնտօնէ հասած լուրերու համեմատ, Մր. Պոնար Հօ յայտարարած է որ անգլիական կառավարութիւնը տեղեկացած է Հայաստանի և Սովիէթ կառա- վարութեանց միջև կատարուած յարաբերութիւնները:

Այս տեղեկութիւններէն կը հասկցուի որ, բաժն է անգլիացի նախարարը, Հայաստան զէպի քօմիտէի կը դիմէ, Սովիէթ կառավարութիւնը կը ճանչ- նայ անոր անկախութիւնը:

Բրիտանական կառավարութիւնը հարկ չէ տեսած խառնուիլ այդ հարցին մէջ, որովհետև այս կոցութեան բանալին հայոց ձեռքն է:

ՀԵՌԱԳՐ. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Գահիրէն կը հարգողն որ, Եգիպտոսի և Սուրիոյ հեռագրային յարաբե- րութիւնները առհնէ մը ի վեր խզուած են:

ՆՈՐ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Պօլսէն կը հեռագրեն թէ թուրք կառավարութիւնը նոր ձեռքարկութեանց սկսած է, որոց մէջ կան նախորդ նախարարներ և երեսփոխաններ:

ԿԻՍԻԻԼՃԻՆՍՅԻ ՄԷՋ

Աթէնքէ կը հեռագրեն թէ հելլէնները հետզհետէ կը հաստատուին Կի- միլիքիայի մէջ: Յառաջիկայ Հինդլարթի օր պիտի կատարուի պաշտօնական յանձնումը:

ՍԱՄՍՈՆ ԿԸ ՄԻԱՆԱՅ ՔԵՄԱԼԻ

Ստոյգ տեղեկութեանց համեմատ Սամսոնի և իր շրջակայքի թուրքերը մրացած են Մուսթաֆա Քէմալի շարժումին:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԵՒ ՌՈՒՍԻԱ

Պարսկաստանի մէջ պալէվիքները հետզհետէ կը միորճուին: Գրուած են բազմութիւն զիրքեր:

Պարսիկ կառավարութիւնը ներկայացուցիչներ կը զ.կէ զէպի Մոսկուա, որմէք զիւրապետական յարաբերութեանց պիտի սկսին սովիէթ կառավարու- թեան հետ:

ԽՌՈՎՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆԳԼԻՈՅ ՄԷՋ

Հօնտօնէ հասած լուրերու համաձայն խոսիւթիւնները կը շարունակուին Իրլանտայի մէջ: Ազգայնական կառավարութիւնը հարիւրական բազմաթիւներու իրականացման համար Մ. Ուիլսոնի օգնութեան պիտի դիմէ:

ՍԵԻ ԾՈՎՈՒ ՄԷՋ

Հասարակաց Խորհրդարանին մէջ, Մր. Հօք, պատասխանելով Մր. Պարնսի հարցապնդումին, ըստ է որ, Սե Մովու համաձայնական մարտունակները պիտի շարունակեն ուժակոծել պալէվիքեան եգիպտոսի, մինչև որ այս վերջինները զարդեցնեն իրենց յառաջադրումները:

ՉՕՐ ԿՈՒՐՕ Ի ԳԱՀԻՐԷ

Կը հեռագրուի թէ Սուրիոյ փրանս. ուժերու հրամանատար զօր. Կուրօ պիտի երթայ Գահիրէ, փոխադարձ այցելու թիւն տալու համար զօր. Ալէնպիի:

ԷՄԻՐ ՓԷՅՉԱԼ

Յառաջիկայ ամսուան մէջ, Էմիր Ֆէյզուլի նախագահութեամբ, արաբական պատուիրակութիւն մը Եգիպտոս պիտի այցելէ, որ պիտի մնայ մինչև ստո- բագրութիւնը թուրք հաշտութեան գաղնագրին: յետոյ պիտի անցնի Եւրոպա:

Մ. ՔԵՄԱԼ ԱՅՏԸՆԻ ՄԷՋ

Մ. Քէմալի ներկայացուցիչները Ալյոսին և հելլէն գրուած գրութիւն մօտ գտնուող վայրերու թուրք ժողովրդաց առաջարկած են միանա իրենց հետ, յոյներու զէմ կուսակցու և գաղնագրի Իզմիրէ դուրս հանելու համար:

Տեղւոյն թուրքերը մերժած են այս առաջարկը, ըսելով թէ չեն ուզեր Մ. Քէմալի գլխավորական շարժումները դիւրացնելու: համար մեկնել իրենց տե- զերէն:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԶԵԿՈՅՑ

Իզմիրի հելլէն ընդ. բանակատեղին հետեւեալը կը ծանուցանէ. — Կրիմի- ճիւտ և Տէտէ Ալթաճ քաղաքները գրաւուած են յունական զօրաց կողմէ տասնց ունէ միջազէպի:

ԹԷՀՐԱՆԻ ՊԱՐՊՈՒՄԸ

Հառէ կը հեռագրեն թէ Թէհրան բողոքի պարպումը սկսած է: Անգլի- ցիք միջոցներ ձեռք կ'առնեն օտարներու կեանքի պահպանութիւն: համար:

ԹՈՒՐԿԵՐԸ ԵՒ ՆԵՂՈՒՅՆԵՐԸ

Պօլսոյ Համաձայնական Իշխանութեանց հրամանաւ, թուրքերը դադրած են այլևս հակակշիռ ի գործ դնել, նեղուցիներէ անցնող նաւերու վրայ:

ՔԱՌԵՉՈՒԹՅԱՆ ԱՂԵՎԱԳՈՒՄ

Ամբարձիքի հիւանդութիւնները կը բժշկուին առանց ցաւի, առանց վրտանգի, առանց գործադրութեան և զիւրութեամբ:

Տառապողները փութան Նշանաւոր հնարիչ ՏՕԲ. ԲԱԲԱԵԱՆՕՐՈՒԼՕԻ որ Աթէնքէ քաղաքս նոր հասած է և հաստատուած Բարալէլ փողոց թիւ 176 նաւամատոյցի ետեւը:

Կրնայ բժշկել արիթմիաթիւան ամեն տեսակները քրօնիկ կամ նոր, արկածի արդիւնքէ և չն. յառաջ եկած:

Երբ քառուկէ այդ ազիկապիւրը անգամ մը վարժուի գործածել հիւանդը այլեւս կտարբեր չազատութիւն կունենայ:

ՏՕԲ. ԲԱԲԱԵԱՆՕՐՈՒԼՕ Երկար տարիներու փորձառութեամբ շնորհակալութեան երաշխիքներ ստացած է: Տօր. ք. Իրաւունք կուտայ եւթա. կաներու իր ազիկապիւրը 15 օր գործածելէ վերջ, եթէ օգուտը չեն տեսած, եւ գործածելու և վարձքը ետ առնելու:

Կր պատրաստէ նաև կրիներու յատուկ որովայնի կապիւր: ՏՕԲ. ԲԱԲԱԵԱՆՕՐՈՒԼՕԻ պատրաստած ազիկապիւրն ուրիշներէ ընդորինակուած չեն. Կրնողունի ամէն օր առաւօտ 8-12 և կէսօրէն ետք 3.30-6 իր քրիկիքը Բարալէլ փողոց թիւ 176:

Ա. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ԿԵՐՊԱՍԵՂԻՆԱՑ ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

2016 Ա. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԹԻՒ 19

Մեր ազնիւ յաճախորդներուն նախասիրութեանց գտնացում տալու համար. բացած ենք սոյն փոքր բայց ճիշտ տեսակներ պարունակող վաճառատունը՝ ուր միշտ պիտի գտնուին եղանակի յարմար գուտ անգլ. և ֆրանս. ընտիր շէվոթներ, սերժեր, վիկաններ և գանազան ճաշակաւոր գազմիրներ:

Գերձակներ և դերձակներու պատկանող յաճախորդներ ևս ազատ են լոկ կերպարի գնումներ կատարել:

Թիւ 16 Ա. ՊԵՐՊԵՐԵԱՆ դերձակատունը կրկին նոր թափով մըն է որ կը շարունակէ յաճախորդներու կողմէ այնքան գնահատուած հագուուտիցէնի գործը, վերջին նորածնութեանց համար մէտաթոյ ու կուրծքոտ սարքը, ամերիկեան ձու տափաւներ ևն. կը պատրաստուին խիստ յաջող և մեծ խնամքով:

ATLANTIC ASSURANCE

COMPANY, 79, CORNHILL

LIMITED. LONDON. E. C. 3.



Գ. Ո. ՈՍԿԱՆ

ԷՐԵՎԱՆՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

ՈՉՄԻՐ, ԲԱՍՍԱԺ ԲԷՇԵՏԻՄԱԼՃԻՕՂԼՈՒ ՎԵՐԻ ԾԱՐԿ ԹԻՒ 2

ՃՕԼԻ ԱԼԷՎՐԱ ԸՆԿ. ԼՄԹՏ.

ՆԱԽԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱԿԱԼ ԵՒ ՀԱՅՔԱՅՐԻՉԳ - ԱՄՈՒՆԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կանոնաւոր երթելու Լոնտօնի և Լիւբրուրի և Մեծն Բրիտանիոյ

ընդ մտահանգիստներուն համար: Նմանապէս ամեն ճանապարհից օպատարկութեան նիւ-տօրի համար:

Գործակալի «Բաշարիւն» ապահովագրական կորպորացիոն ընկերութեան ընթ.

Տիար Ժ. Տ. ԱԼԷՎՐԱ ԵՒ ՈՐԴԻՔ

ՆԱԽԱՐԿՈՒՆԵՐ և ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԻՐԷԱ-ՅՈՒՆԱՍՏԱՆ

ԹԱՔԻ ԵՍՍԵՆԿՍԻՐՈ

54

ՅԻՇԱՍԿՆԵՐ



ԷԼԵՑԹԵՐԻՈՍ ՎԵՆԻՉԷԼՈՍ

Բ.

Ես, այն ատեն, կը խորհէի Պուք. ընչի դաշնագիրը ամբողջացնել զինակցութեան դաշնագիրով մը՝ ընդ մէջ չար տէրութեանց, Սերպիոյ, Յունաստանի, Պուլկարիոյ և Ռուսաստանի:

Երբ իրազեկ ըլլանք պարբանեան տագնապի պատմութեան այն պարագաներուն որոնք անձնօթ են այսօր. երբ գիտանաք Վէնիզելոսի ամեն ըրածները, մեծ մարդուն հանդէպ մեր հիացումը աւելի պիտի մեծնայ: Ահա հաւաստի մարդ մը որ և է վախճանիք բան չունի իր բոլոր գործերուն, նայ իսկ իր ամէն մտածումներուն հրապարակումէն:

Պուքընչի դաշնագրէն յետոյ, Վէնիզելոս ստիպուեցաւ կռուել Կ. Պոլսոյ աւստրիական մեքենայութեանց դէմ: Այսօր չեմ ուզիր Աթէնքի դաշնագրին պատմութիւնը ընել, ո՛չ ալ պնդել այն իրողութեան վրայ՝ թէ քանի քանի անգամներ մաղ մնաց որ Ռուքիոյ և Յունաստանի միջև նոր պա-

տերազմ մը պայթէր, և թէ Վէնիզելոս պատրաստուած էր ամէն պատահականութեանց դէմ: Կը փափաքիմ, սակայն, այժմէն արտայայտել այն հրապարակային յարգանքը որուն արժանի է բարոյական գեղեցկութիւնը Վէնիզելոսի՝ որ ո՛չ միայն չուզեց ստուերի մէջ թողուլ այն ծառայութիւնները զորս այն ատեն կրցայ մատուցանել Յունաստանի և խաղաղութեան, այլ ընդհակառակը, պնդեց որ անոնք պայծառ լոյսի մը մէջ զրուին: Ճշմարտագէտ մեծ մարդերը փոքրոզի զգացումներ չեն ունենար:

Վէնիզելոս միեւնոյն ժամանակ իր ուսերուն վրայ ունէր եպիտոսի խընդիրը Անիկա շատ լաւ գիտէր՝ թէ անկարելի էր Յունաստանի համար՝ ընդգիմանալ մեծ տէրութեանց միահամուռ բազմաքին, և թէ՛ անպատշաճ էր որ ինք պատճառ դառնար ընդհանր պատերազմի մը: Ինքզինքը զոհեց իր պարտքներ թիւն, լաւ գիտնալով որ պիտի զար օր մը ուր պիտի կրնար ձեռք ձգել Եպիտոսը առանց Սերպիոյ խաղաղութիւնը վերգովիլու: Բայց, այս խաղին մէջ չափազանց յոգնեցաւ, ինչպէս յոգնած էր՝ երբ Պուքընչի մէջ ձեռք չէր բերի՝ Յոյներուն համար՝ արեւը, լուսինը և համաստեղութիւնները: Իր հակառակորդները Աթէնքի մէջ գաւառական կը դիտէին զինքը: Օգուտ

ՏՔԹ. Ե. ԱՐՉՈՒՄԱՆԵԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿ

Որ երկար տարիներ ծոռայած է Կ. Պոլսոյ զինուորական, Պուլկարաց և Ենի-Պուլէի Ազգ. Հիւանդանոցներուն մէջ, գիտնալ վերջնապէս Ֆրանսիոյ Մասժաճ կը կտար յետոյ և Վիեննայի կտարեւտքերէն զբոսնէ:

Կը դարմանուին յոգացաւէ, ըրեմաթիզմէ, արթրիթիքէ, անդամալուծութեան և ստամոքսէ ստուարողները իրենց մարմնական ոյժը վերստանաով: Օբերատիւ հետեւնօք մարմնոյ թերութիւնները կը յարգարուին, նոյնպէս դէմքի խորշոմները անհետանալով իրենց նախկին վիճակը կ'ստանան: Հիւանդ կ'ըզուին ամէն օր կէս օրէ առաջ ժամը 8 էն 12 և կէսօրէ վերջ 2 էն 4 իր քրիկիքը, Պրոպիլիս, Ալեքի մեքիս թիւ 5 նաև մասնաւոր ժամագրութիւններ այցելութեան համար:

Երկուշաբթի և Ուրբաթ օրեր կէսօրէ վերջ 2 էն 5 աղքատաց համար ձրի:

Կը ծախուին նաև հլեքարական գօտիներ:

Table with 2 columns: Item name and Price. Items include Էնթեր, Լոնտօն, Նիւ-Սօրք, Բարիկ, Հոտ, Աթէնք, Պերլին, Զուկցերիս, Հօլանտա, Անգլ. ոսկի, Տօլար, Ճրանք, Լիր Իտալ., Տրախմի, Լէյ, Բուպի, Մարք, Բուրօն, Ոսկի, Նարթիսն ոսկի.

ԳՈՐԾ ԿԸ ՓՆՏՈՒ

Երիտասարդ մը որ գիտէ սեղական լեզուները, ինչպէս հայերէն, յունարէն, ֆրանսերէն և թուրքերէն, կը փափաքի գործ մը ունենալ վաճառատան մը մէջ:

Դիմել խմբագրատուն:

Ի ԶՄԻՐ-ՊՕԼԻՍ ՅԱԿՈՒ ՄՈՄՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

2016 Ա. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԹԻՒ 6

Պոլսոյ և Իզմիրի միջև առևտրական և վաճառականական յարաբերութիւններ զիրարցնելու համար փափաքողք կրնան զինել վերոյիշեալ հասցէին և ընել իրենց յանձնարութիւնները:

Թանձառութիւնք պիտի կատարուին անձնական երթևեկութեամբ:

ներէ ի վեր անուցած մէկ փափաքս, այն է 1914ի ամառուան սկզբնաւորութիւնէն օգտուելով ճամբորդութիւն մը կատարել դէպի Ճարտնա Վէնիզելոս լսեց և հարցուց ինձի թէ կուզե՞ի՞ արդեօք զինքը ընդունել իր ճամբու ընկերո Յետոյ, իր ըսածը ուղղելով ժպտալէս հարցուց ինձի թէ ապահով էի որ ազատ պիտի ըլլայի 1914ի առաջի կիտուն մէջ: Անիկա այս խօսքով կ'անխաղէր այն ընդհանուր համազումին թէ՛ 1913ի գործը յառաջ բերողիւ իր յանուութեան վրայ պիտի մնային իրենց ժողովուրդներուն կողմէ:

Ի մեծ զարմացում հրաւիրեալներուն, պատասխանեցի իրեն թէ՛ ապահով էի այդ ազատութեան մասին, ո՛չ միայն ինձի համար, այլ նաև իրեն համար: Վէնիզելոսի նկատմամբ՝ մէկ տարի սխալեցուց հաշուս մէջ: Բայց եթէ կրկինբու խնդրը չըլլար և ընդհանուր պատերազմը վրայ չի հասնէր, իմ նախատեսած ժամանակին տեղի պիտի ունենար այդ ճամբորդութիւնը: Իր մեծութիւնը՝ երեւակայութեան շատ աւելի ստուեր կը բերէր: Այն մարդը որ արդի Յունաստանը ստիպած էր, հարկ էր որ տեսարանէն անհետանար ամէն գնով, որպէսզի կարգ մը անձնաւորութիւններ դուրս ելլին մթութիւնէն: Ասիկա զգացած էի արդէն 1913 յուլիսին. ա՛լ աւելի համոզուեցայ հետեւեալ ամիսներուն մէջ:

(Շարունակել)